եմ Ձեր դերազանցութիւնից տալ հարկ եղած անմիջական հրամանները ձեր զօրամասերին՝ վերջ դնելու համար թշնամական գործողութիւններին։

Սպասելով ձեր պատասխանին՝ խնդրում եմ ընդունել խորին յարգանաց հաւաստիքը։

24 յունիսի 338 Թիւրք Մեծ Ազգային Ժողովի
1920 Արտաքին գործերի կոմիսար Բէքիր Սամի

Այս նամակին մեր կողմից պատասխանուեց հետևեալը.

Սարիղամիշ, գնդ. Միրիմանեանին։ Խնդրում է սոյն հեռագիրը ուղարկել օսմանեան տասնեհինգերորդ զօրաբանակի հրամանատար Կարաբեքիր փաշայի միջոցով հեռևեալ հասցէին.

Անգորա. Թիւրք Ազգային Մեծ Ժողովի արտաքին գործերի վէքիլ Մեծ Բէքիր Սամիին։

Հայաստանի հանրապետութիւնը իր հիմնուելու օրից իսկ ձգտել է և այժմ էլ ձգտում է ստեղծել բարի դրացիական փոխյարաբերութիւններ իր հարևանների հետ և խաղաղ համակեցութիւն տեղական բոլոր ժողովուրդների միջև։ Հայաստանում լոյալ մահմեդական բնակչութիւնը միշտ օգտուել է և օգտուում է ներկայիս ևս պետութեան միւս քաղաքացիների համահաւասար իրաւունքներից։ Սոյն հաւատարիմ քաղաքացիների կեանքն ու գոյքը միշտ պաշտպանուում է Հայաստանի կառավարութեան կողմից ամէն տեսակ չարամիտ փորձերի, ինչպէս նաև աւազակային յարձակումների դէմ, որոնք մեծ մասամբ կատարուում էին դրսից եկած աւազակային և խռովարար մուսուլման խմբերի կողմից։ Սրանք առաջ էին բերում խռովութիւն և անիշխանութիւն տեղական մուսուլման ազգաբնակութեան խաղաղ կեանքի մէջ։

Հայ զօրքերի վերջին ռազմական գործողութիւնները Օլթիի շրջանում նպատակ նէին ազատելու հայկական հողամասը անիշխանական տարրերից և երբեք ուղղուած չէին մահմեդական խաղաղ ազգաբնակութեան դէմ։ Օլթիի շրջանի վարչութիւնը այժմ նշանակուած է նոյն շրջանի մուսուլմաններից։

Հայ ազգը ի վաղուց անտի ճիգ է թափում անկեղծօրէն մէկդի թողնել այս մռայլ անցեալը և ստեղծել բարի դրացիական յարաբերութիւններ Թիւրքիայի հետ։ Հայաստանի և Թիւրքիայի միջև բարի դրացիական փոխյարաբերութիւնների վերահաստատումը ամբողջովին կախուած է Թիւրք ղեկավարների ընթացքից, որոնք պէտք է մի անգամ ընդ միշտ ճանաչեն հայ ազգի իրաւունքները ամբողջական Հայաստանի սահմանների վերաբերմամբ և վերջ դնեն Հայաստանի Հանրապետութեան սահմաններում իրենց ագէնտների գործունէութիւններին։

Ձեր Մեծ Ազգային համաժողովը Անգորայում հաստատեց Տաճկաստանի հայկական վիլայէթներում Հայաստանի անկախութեան իրաւունքը, և եթէ դրանով Թիւրք ազգը ճանաչում է լիովին Հայաստանի օրինաւոր իրաւունքները յիշեալ սահմաններում, ապա, ուրեմն, հայ ազգը կունենայ հիմք Թիւրքիոյ և Հայաստանի միջև կանոնաւոր փոխյարաբերութիւններ հաստատելու։ Քարտուղար Տէր-Յակոբեան. 30 յունիսի 1920 թ.»։

Այս նամակին ի պատասխան ստացուեց հետևեալ հեռագիրը.